353
Հ-11

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԺՈՂՈՎՐԴԱ-ԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

10·04
16208

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. Մ. ՅԱՄՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная библиотека

09 SEP 2013

40.266

Գրառեպ. № 453 ը. Տիրաժ 200

Պետհրատի չերկրորդ տպարան Յերևան

353
Հ-11

2802-10

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1928 թ. հունվարի 5-ին

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ժողովրդական լուսավորության գործը գավառում անմիջականորեն ղեկավարում, հրահանգում է, նաև Գավառական լուսավորության հիմնարկությունների գործունեությանը վերահսկում է լինում գավառական գործադիր կոմիտեյի Ժողովրդական Լուսավորության բաժինը։

2. Գավառական գործադիր կոմիտեյի Ժողովրդական Լուսավորության բաժինը միաժամանակ հանդիսանում է Ժողովրդական Լուսավորության Կոմիսարիատի գավառական որգանը, իր գործունեության ընթացքում ղեկավարվում է իշխանության բարձրագույն որգանների, Ժողովրդական Լուսավորության Կոմիսարիատի, գա-

վառական խորհուրդների համագումարի և գործադիր կոմիտեների որոշումներով ու հրահանգներով և կիրարկում է այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են գավառի լուսհիմնարկների զարգացման համար։

3. Գավգործկոմի լուսբաժնի իրավասության ենթակա է գավառում գործող ինչպես բյուջեյով, այնպես էլ հասարակական ու տնտեսավարական կազմակերպությունների և մասնավոր անձանց միջոցներով պահվող ժողովրդական լուսավորության հիմնարկությունների ամբողջ ցանցը, բացի այն լուսհիմնարկություններից, որոնք անմիջականորեն ենթակա են Լուսժողկոմատին, կամ գտնվում են այլ գերատեսչությունների իրավասության ներքո։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Անմիջականորեն Լուսժողկոմատին ենթակա լուսհիմնարկների, ինչպես նաև այլ գերատեսչությունների տեղական մարմինների նկատմամբ գավլուսբաժինը սահմանվում է ընդհանուր հսկողություն, սակայն իրավունք չունի վարչականորեն միջամտելու նրանց աշխատանքներին։

Բ. ԳԱՎԱՌԱԿԱՆ ԼՈՒՍԲԱԺՆԻ ԿԱԶՄԸ

4. Գավլուսբաժինը կառավարում է վարիչը, որին նշանակում է գավգործկոմը, համաձայնության գալով Լուսժողկոմատի հետ։

5. Գավլուսբաժնի վարիչը պատասխանատու է, ինչպես Լուսժողկոմատի, այնպես էլ գավգործկոմի առաջ գավլուսբաժնի գործունեության և գավառի լուսավորության աշխատանքների համար։

6. Գավլուսբաժնի վարիչին կարող է պաշտոնանկ անել կամ ժամանակավորապես պաշտոնից հեռացնել գավգործկոմը, նախորոք համաձայնեցնելով իր որոշումը Լուսժողկոմատի հետ։

7. Գավլուսբաժնին առընթեր գործում են սոցիալական դաստիարակության և քաղաքական լուսավորության տեսուչները, որոնց նշանակում է գավգործկոմը՝ համաձայնեցնելով իր որոշումը Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի համապատասխան վարչության և գավլուսբաժնի հետ. տեսուչներից յուրաքանչյուրը իր աշխատանքի բնագավառում պատասխանատու է լուսավորության հիմնարկությունների կացության համար։

Գավլուսբաժնի կազմի մեջ է մտնում նաև դիվանն ու հաշվապահական մասը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Արհեստագիտական լուսավորության հիմնարկությունների բավականաչափ զարգացած ցանց ունեցող գավառներում լուսբաժինը Լուսժողկոմատի թույլտվությամբ կարող է ունենալ Արհլուստեսուչ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2. Ազգային փոքրամասնության զգալի թվով բնակչություն ունեցող գավառներում լուսբաժնի ապարատի մեջ մտնում է նաև համապատասխան ազգային փոքրամասնության տեսուչը։ Ազգային փոքրամասնության տեսչության կազմը սահմանում է գավլուսբաժինը, համաձայնության գալով Լուսժողկոմատի հետ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—3. Յերևան և Լենինական քաղաքներում մասսայական լուսհիմնարկությունների աշխատանքներն անմիջականորեն ղեկավարելու համար՝ սահմանվում է քաղաքի լուսհիմնարկությունների տեսչի պաշտոն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—4. Գավառակի լուսավորության գործն անմիջականորեն սպասարկելու նպատակով նշանակվում են գավառակային լուստեսուչներ, որոնք ամրացվում են առանձին գավառակներին։

8. Գավառակի ժողովրդական լուսավորության վերաբերյալ նախագծերը նախապես քննելու, ինչպես և գավլուսբաժնի ու այլ գերատեսչությունների միջև աշխատակցության կապ ստեղծելու նպատակով՝ գավլուսբաժնին առընթեր և նրա վարիչի նախագահությամբ գործում է պլանային խորհրդակցությունը, որի կազմի մեջ են մտնում տեսուչներն ու շահագրգռված գերատեսչությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչները։

9. Ծրագրային-մեթոդական հարցեր քննելու և մշակելու համար գավլուսբաժնին առընթեր կազմակերպվում է գավառական մեթոդական հանձնաժողով, որը գործում է մեթոդական որգանների մասին հրատարակված հատուկ կանոնադրությամբ։

10. Գավլուսբաժնին առընթեր գործում է նաև քաղաքական լուսավորության գավառական կոմիտեն, որը կազմված է գավքաղլուստեսչի նախագահությամբ և ՀԿԿ և ՀԼԿՅԵՄ գավկոմի ագիտ-պրոպ բաժնի, կին բաժնի, գավարհբյուրոյի, Կոոպերացիայի, Հողբաժնի, կարմիր բանակի քաղաքական որգանի, շեֆ-ընկերության մեկական ներկայացուցիչներից։—Յեվ ազգային փոքրամասնությունների տեսուչներից (յեթե գավառում կա ազգային փոքրամասնության պատ-

կանոզ զգալի թվով բնակչություն)։ Այս կոմիտեի իրավասության սահմանները վորոշվում են Լուսժողկոմատի հատուկ հրահանգով։

Գ. ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻ ԼՈՒՍԲԱԺՆԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

11. Գավլուսբաժինը՝

ա) Կիրառում է իշխանության բարձրագույն որգանների, Լուսժողկոմատի, Գավգործկոմի և Գավառական խորհուրդների համագումարի վորոշումներն ու կարգադրությունները գավառի լուսավորության հարցերի վերաբերմամբ։

բ) Ուղղություն է տալիս լուսավորության ստորին (գավառակային և գյուղական) որգանների գործունեությանը։

գ) Պլանավորում է ժողովրդական լուսավորության գործը գավառում, կազմում է ժողովրդական լուսավորության զարգացման տարեկան գործառնական հեռանկարային պլանը։

դ) Ապահովում է գավառի ազգաբնակության կուլտուրական կարիքները լուսհիմնարկությունների անհրաժեշտ ցանցով և մասնավորապես միջոցներ է ձեռք առնում կենսագործելու ընդհանուր պարտադիր կրթությունը։

ե) Կազմակերպում և ղեկավարում է հատուկավոր բնակչության անգրագիտությունն ու կիսագրագիտությունը վերացնելու գործը։

զ) Վերացնում է անգրագիտությունը նախազորակոչյան տարիքի ամբողջ յերիտասարդության մեջ և կիսագրագիտությունը՝ փոփոխական կազմի կարմիր բանակայիններին մեջ։

է) Քաղաքական-լուսավորական աշխատանք է կատարում նախազորակոչիկների մեջ հավաքների միջև ընկնող շրջանում և փոփոխական կազմի մեջ արձակուրդում գտնված ժամանակ։

ը) Կազմակերպում է ռազմական անկյուններ բոլոր կրթական կազմակերպություններում և խրճիթ-ընթերցարաններում։

թ) Վարում է գավառի լուսհիմնարկների նախահաշվա-բյուջետային աշխատանքները և ուղղություն է տալիս ստորին խորհրդային որգաններին՝ կազմելու և կիրառելու ժողովրդական լուսավորության նախահաշիվները։

ժ) Հոգում է գավառի բյուջեյով պահվող ցանցի տնտեսական և ոպերատիվ բոլոր ծախսերը և հսկում է ստորին որգանների բյուջեյով պահվող ցանցը տնտեսապես սպասարկելու։

ժա) Միջոցներ է ձեռք առնում ապահովելու դպրոցների մատչելիությունը աշխատավոր բնակչության համար։

ժբ) Կազմակերպում է դպրոցներին ու սյ

լուսիմաստներին դասագրքեր և ուսումնական պիտույքներ մատակարարելու գործը։

ԺԳ) Հսկում և հրահանգում է գավառի լուսաշխատանքները։

ԺԴ) Իրականացնում է տպագրական գործի և դասախոսությունների, ներկայացումների ու նման այլ ձեռնարկումների քաղաքական-գաղափարախոսական վերահսկողությունը գավառում։

ԺԵ) Պայքարում է յերեխաների անապատանության դեմ և քաղխորհրդի հանձնարարությամբ վարում է անչափահասների խնամակալության ու հոգաբարձության գործը։

ԺԶ) Ապահովում է լուսիմաստները վորակյալ աշխատավորներով, նմանապես կազմակերպում է ժողովրդական լուսավորության հիմնարկություններում աշխատողների վորակը բարձրացնելու գործը։

ԺԷ) Աջակցում է Լուսժողկոմատի տեսչության ներքո գտնվող լուսիմաստարկություններին։

ԺԸ) Աջակցում է մանկան կոմունիստական շարժման զարգացմանը գավառում։

ԺԹ) Վարում է գավառի ժողովրդական լուսավորության հիմնարկությունների ինֆորմացիոն-վիճակագրական աշխատանքները։

Ժի) Ներկայացնում է Լուսժողկոմատին և տեղական դեկավար որգաններին պարբերական հաշվետու զեկուցումներ իր գործունեության ու գավառում կատարվող լուսաշխատանքների մասին։

Իա) Կազմակերպում է և դեկավարում է գավառագնատական ընկերությունների աշխատանքները։

Իբ) Աջակցում է հնության և արվեստի ու բնության հուշարձանների պահպանության կոմիտեների աշխատանքներին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գավառային գործկոմների և գյուղխորհուրդների բյուջեյով պահվող լուսիմաստարկների տնտեսական կարիքները հոգում և անհրաժեշտ պարագաները մատակարարում են համապատասխան գավառակային գործկոմները և գյուղխորհուրդներն ամիսականորեն։

12. Այս կանոնադրության 10-րդ հոդ. նախատեսված ֆունկցիաները կատարելու համար գավլուսբաժնին իրավունք է վերապահվում.

ա) Հրատարակելու իր իրավասության սահմաններում կարգադրություններ, հրահանգներ և այլ դեկավար նյութեր։

բ) Բաց անելու և փակելու, վերակազմության յենթարկելու իր տեսչության յենթակա լուսիմաստարկությունները գավգործկոմի համաձայնությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. - Բարձր տիպի (Բ. աստ. յոթնամյա, գյուղերիտական, գյուղատնտեսական, մեծահասակների և այլն) դպրոցների և անչափահասների սոցիալ-իրավական պաշտպանության հիմնարկությունների փակումն ու վերակազմությունը տեղի յե ունենում Լուսժողկոմատի թույլտվությամբ։

գ) Միջնորդել Լուսժողկոմատի և գավգործկոմի առաջ փոփոխելու, լրացնելու և վերանայելու ժողովրդական լուսավորության բնագավառում գործող կարգադրություններն ու վորոշումները, ինչպես նաև հրապարակելու նորերը։

դ) Հետաքրքրելու և ստուգելու իր տեսչության ներքո գտնվող լուսհիմնարկությունները։

ե) Գործող որենսդրությամբ սահմանված կարգապահական պատժի և պատասխանատվության յենթարկելու իր տեսչության ներքո գտնվող հիմնարկությունների պաշտոնատար անձանց պաշտոնական զանցառությունների և հանցանքների համար։

զ) Համաձայն գործող որենքների կատարելու իրեն յենթակա գավառում գործող հիմնարկությունների վարչական և ժանկավարժական անձնական կազմի մեջ նշանակումներ, պաշտոնանկություններ և տեղափոխություններ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գավառային գործկոմներին իրավունք ե վերապահվում գյուղական լուսհիմնարկների նկատմամբ գավառի լուսաշխատավորների կազմի մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելիս՝ դիտողություններ և առաջադրություններ անելու։

13. Գավլուսբաժնի տեսուչների ֆունկցիաները նրանց աշխատանքի ժամանակաշրջանում սահմանվում են Լուսժողկոմատի կողմից հրատարակված հատուկ կանոնադրությամբ։

14. Գավլուսբաժինն ունի որենքով սահմանված ձևով կնիք ու շտամպ։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահի տեղակալ՝ Հ. ԱՉԱՖՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահի տեղակալ՝ Ա. ՄՈՒԱՎՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Իսկականին համեմատ ե. Որենսդրական իրավաբանական բաժնի քարտուղար՝ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յերևան

ՀՀ Ազգային գրադարան
NL0219606

40. 266